կատարելու հիմքով լուծել «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ ՎՁՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04 ծածկագրով պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված կարգը՝ Պատվիրատուն միակողմանի լուծել է պայմանագիրը, կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Այսպիսով՝ «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությանը տրվել է 10 օրացույցային օր՝ տուժանքով սահմանված որակավորման ապահովման 9178200 ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման 6118800 ՀՀ դրամ գումարները Եղեգնաձորի համայնքապետարանի՝ 900355101065 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարը չվճարելու դեպքում՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությանը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվի մատակարարի բանկը նշած գումարները գանձելու նպատակով:

Դատարանը նշված որոշման ուսումնասիրության և գնահատման արդյունքում հանգում է հետևության, որ Որոշումը պատճառաբանված է, քանի որ դրանում առկա են հիմնավորումներ արձանագրված անհամապատասխանությունների մասին: Ավելին՝ Որոշմանը նախորդել է 09.10.2023 թվականի ծանուցումը, որում առավել մանրամասն նշվել են անհամապատասխանություններն, այսինքն՝ Պատասխանողը Հայցվորի համար բացահայտել է թույլ տրված խախտումները դեռևս 09.10.2023 թվականի ծանուցմամբ, ինչին և հաջորդել է Որոշումը, ուստի Դատարանի գնահատմամբ Որոշման չպատճառաբանված լինելու փաստարկներն անհիմն են:

Ամբողջ վերոգրյալի արդյունքում՝ Դատարանը փաստում է, որ հայցն անհիմն է և մերժման ենթակա:

Դատարարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը մերժվում է՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

«Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 20.10.2023թ. թիվ 623-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը, համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**